ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 90 - Ա
07 մայիսի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՏԱՆԻ ԴԱՇՆԱԿԱՀԱՐՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Մշակութային օրենսդրության հիմունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով՝

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտների շրջանում մայիսյան հաղթանակներին նվիրված պատանի դաշնակահարների մարզային փառատոնի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտների շրջանում մայիսյան հաղթանակներին նվիրված պատանի դաշնակահարների մարզային փառատոնի կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Սույն որոշման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թվականի մայիսի 7-ի
N 90-Ա որոշման

Կազմ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտների շրջանում մայիսյան հաղթանակներին նվիրված պատանի դաշնակահարների մարզային փառատոնի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի

Բաղալյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, /նախագահ/
Չարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ
Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Չքոյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
Խլղաթյան Խ. - <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ/
Հովեյան Բ. - <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ տնօրեն
Մալխասյան Է. - Գավառի պետական երաժշտական քոլեջի տնօրեն /համաձայնությամբ/
Մելիքյան Ա. - Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ կրթության, մշակույթի և սպորտի գծով /համաձայնությամբ/
Կարապետյան Ա. – Մարտունու քաղաքապետի տեղակալ /համաձայնությամբ/
Հովհաննիսյան Ա. – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ /համաձայնությամբ/
Ղալեչյան Հ. - Ճամբարակի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/
Բարսեղյան Ս. - Վարդենիսի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքի և սոցիալական բաժնի պետ /համաձայնությամբ/
Դաշտոյան Գ. - <<Գեղարեգ>> կրթամշակութային հասարակական կազմակերպության նախագահ /համաձայնությամբ/

Աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյան

Հավելված N2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թվականի մայիսի 7-ի
N 90-Ա որոշման

Կանոնակարգ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտների շրջանում անցկացվող մայիսյան հաղթանակներին նվիրված պատանի դաշնակահարների մարզային փառատոնի

1. Նպատակը

- Նպաստել դաշնամուրի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը
- հանրությանը նեկայացնել մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում սովորող շնորհաշատ պատանի դաշնակահարներին
- նպաստել առաջավոր փորձի տարածմանը
- ներկայացնել հայ և արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործությունները

2. Փառատոնի անցկացման ղեկավարումը

Փառատոնի ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը: Փառատոնը կազմակերպվում և անցկացվում է <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ միջոցով՝ <<Գեղամա>> հեռուստաընկերության հետ համատեղ:

3. Փառատոնի մասնակիցները և անցկացման կարգը

Փառատոնը կանցկացվի երկու փուլով՝ ներդպրոցական և մարզային: Փառատոնին կարող են մասնակցել մարզի արվեստի և երաժշտական դպրոցիներից երկուական աշակերտ: Մասնակիցներից մեկը կներկայացնի հայ, մյուսը՝ արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ 3-5 րոպե տևողությամբ: Ներդպրոցական փուլը կանցկացվի 2014 թվականի մայիսի 13-16-ը՝ դպրոցներում: Ներդպրոցական փուլում մրցութային կարգով կընտրվեն մարզային փուլի մասնակիցները: Մարզային փուլը կնկարահանվի և կցուցադրվի <<Գեղամա>> հեռուստաընկերությամբ՝ երկու հաղորդման միջոցով: Մարզային փուլի նկարահանումները կանցկացվեն 2014թվականի մայիսի 26-27-ին:

4. Ծախսերը

Փառատոնի մարզային փուլի նկարահանման և ցուցադրման, ինչպես նաև մասնակիցների և դպրոցների հավաստագրերի և հուշանվերների ձեռբերումը հոգում

է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը՝ <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ միջոցով: Մասնակիցների տեղափոխումը մարզկենտրոն և հակառակ ուղղությամբ հոգում են գործուղող կազմակերպությունները

5.Պարգևատրումը

Փառատոնի մարզային փուլի յուրաքանչյուր մասնակցի կտրվի հավաստագիր և հուշանվեր: Մասնակից դպրոցներին կհանձնվի հավաստագրեր:

6. Հայտերը

Փառատոնի մարզային փուլի հայտերը նեկայացվում են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն՝ մինչև 2014 թվականի մայիսի 20-ը: Հայտի մեջ պետք է նշվի դպրոցի անվանումը և հեռախոսահամարը, մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը, տարիքը, դասարանը, դասատուի անունը, ազգանունը, կատարվող ստեղծագործության անվանումը և հեղինակը: Հայտը պետք է վավերացվի դպրոցի տնօրենի ստորագրությամբ և համայնքի ղեկավարի ստորագրությամբ ու կնիքով:

Աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյան